



Սայաթ Նովա

Դիբա ու ենգիդունիա, գարբաբ ու գար իս, գովե՛լի

Դիբա ու ենգիդունիա, գարբաբ ու գար իս, գովե՛լի.

Հրնդու դիարեմեն էկած գար-դալամբար իս, գովե՛լի.

Շատ սովաքար քիզ կու պրտոե՛ դուն անգին քար իս, գովե՛լի.

Անտակ ծովի միջեն հանած անգին գովհար իս, գովե՛լի:

Յիփ դու բաղչեն սէյրան կ'էհաս՝ ծովի նրման գուքայ ալիդ,

Գըլուխըդ պահելով արա՛ նամ չըդիբչի խաթուխալիդ,

Տեսնողըն հէյբաթ կու մրնայ էդ քու սիրուն մահ-ջամալիդ,

Աշխարհումըս նուր դուս էկած, թագա նուգբար իս, գովե՛լի:

Արի միգիդ մէ լա՛ւ կացի, դո՛ւրբան ըլիմ նուրվաթումըն,

Ման էկայ յիրգիր՝ չըտեսայ էդ քու նրման ջուրաթումըն,

Վո՛ւնց Հրնդու դիարումըն կայ, վո՛ւնց փըռանգի սուրաթումըն.

Քաշվիլ իս քարգահի մէջըն. ուրիշ թահար իս, գովե՛լի:

Թարիփըդ դավթար իմ արի, փիլ պիտի, վուր գիրքըն տանե.

Դուն քու մըտքի հիդ մի՛ էհա, էդ խիալըն սըրտեդ հա՛նե.

Մէջքըդ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նրման է,

Աշխարհիս շըվաք իս անում՝ սալթու-չինար իս, գովե՛լի:

Յիս քիզանից չիմ հիռանայ, թէ չըհասնի մահիս վաղեն.

Յիփ միռանիմ, շա՛ղ տու վըրէս դաստամագի թիլի շաղեն.

Հենչաք ըլի՛ ո՛ւրախ կենաս. Սայաթ-Նովեն առնե դաղեն.

Շատ մարդ կ'օտէ, թէ եար ունիմ, դուն ո'րիշ եար իս, գովե'լի: